

ԲԱԺԻՆ 7.

ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՆԱԿՆ ՈՒ ԿԱԶՄԸ

Մեթոդաբանական պարզաբանումներ

Մարդասեանարի հաշվառման միավոր է հանդիսացել **տնային տնտեսությունը**, որի միջոցով իրականացվել է բնակչության հաշվեգրումը:

Ըստ կառուցվածքի առանձնացվել են՝ **անհատական և խմբային (ինստիտուցիոնալ)** տնային տնտեսություններ:

Անհատական տնային տնտեսությունների թվին են դասվել առանձին բնակելի միավորում կամ դրա մի մասում, կամ մի քանի շինություններում համատեղ բնակվող 2 և ավելի անձանցից բաղկացած տնային տնտեսությունները, որոնց անդամներն իրենց կենսական կարիքներն ապահովել են ընդհանուր տնտեսություն վարելով՝ ամբողջությամբ կամ մասամբ միավորելով իրենց միջոցները: Այդ անձինք կարող էին կապված լինել ազգակցական կամ ամուսնական կապով, կամ չլինել ազգական, կամ ն՝ մեկը, ն՝ մյուսը: *Անհատական տնային տնտեսությունը* կարող է բաղկացած լինել նաև մեկ անձից, ով բնակվել է առանձին բնակելի միավորում կամ դրա մի մասում և ինքնուրույն ապահովել իր բոլոր կենսական կարիքները:

Անհատական տնային տնտեսությունների կազմում առանձնացվել են նաև նուկլեար ընտանիքները: **Նուկլեար ընտանիքներ** են համարվել անհատական տնային տնտեսությունների կազմում հետևյալ կազմով ընտանիքները՝

- ամուսնական զույգն առանց երեխաների,
- ամուսնական զույգը մեկ կամ ավելի չամուսնացած երեխաների հետ,
- միայնակ մայրը մեկ կամ ավելի չամուսնացած երեխաների հետ,
- միայնակ հայրը մեկ կամ ավելի չամուսնացած երեխաների հետ,

Խմբային (ինստիտուցիոնալ) տնային տնտեսությունների թվին են դասվել մանկատներում, տարեցների և հաշմանդամների սոցիալական ապաստարկման կազմակերպություններում, գիշերօթիկ դպրոցներում, հատուկ նշանակության դպրոցներում, կրոնական կազմակերպություններում, քրեակատարողական հիմնարկներում մշտապես բնակվողները, այսինքն համատեղ բնակվող բնակչության խմբեր, ովքեր սովորաբար ենթարկվել են ընդհանուր կանոնների և սնվել են համատեղ:

